ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՌԱՋԻՆ ԱՏՅԱՆԻ ԸՆԴՀԱՆՈՒՐ
ԻՐԱՎԱՍՈՒԹՅԱՆ ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆ
ԱԶԱՓՆՅԱԿ-2 ՆՍՏԱՎԱՅՐ
(ՀՀ, համայնք ԵՐԵՎԱՆ, ԱԶԱՓՆՅԱԿ, ՀԱԼԱԲՅԱՆ Փ., շենք 41Ա, 10-ՐԴ ՀԱՐԿ)

ՈՐՈՇՈՒՄ
Հայցադիմումը վարույթ ընդունելու մասին

ԵԴ2/0127/02/25 ք. Երևան
23 Հունվարի 2025թ

Երևան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության քաղաքացիական դատարանի դատավոր Ն.Ավետիսյանս ծանոթանալով «Լեոպոլդ և ընկերներ» ՍՊ ընկերության ներկայացուցչի կողմից ներկայացված հայցադիմումին և կից փաստաթղթերին.

ՊԱՐԶԵՑ

Դատարանի 15.01.2025թվականի որոշմամբ վերադարձվել է «Լեոպոլդ և ընկերներ» ՍՊ ընկերության ներկայացուցչի կողմից ներկայացված հայցադիմումն ընդդեմ Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Վանաձորի համայնքապետարանի՝ ՍՊԸ-ի միջև 10.08.2021թ. կնքված թիվ «ՀՀ ԼՄՎՔ ՀԲՄԱԾՁԲ-21/65» ծածկագրով պայմանագրի շրջանակներում կողմից էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով 11.03.2024թ. ներկայացրած պայմանագրի կամ դրա կատարման մի մասի կատարման արդյունքների վերաբերյալ հանձնման-ընդունման ավարտական արձանագրությունը Վանաձորի համայնքապետարանին ստորագրել պարտավորեցնելու և որպես հետևանք՝ «Լեոպոլդ և ընկերներ» ՍՊԸ-ին 36.409.790 ՀՀ դրամ վճարել Վանաձորի համայնքապետարանին պարտավորեցնելու պահանջների մասին:

Հայցվորը վերացրել է հայցադիմումի թերությունները և այն կրկին ներկայացրել դատարան ընդդեմ Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Վանաձորի համայնքապետարանի՝ «Լեոպոլդ և ընկերներ» ՍՊԸ-ի կողմից Վանաձորի համայնքապետարանի և «Լեոպոլդ և ընկերներ» ՍՊԸ-ի միջև 10.08.2021թ. կնքված թիվ

«ՀՀ ԼՄՎՔ ՀԲՄԱԾՁԲ-21/65» ծածկագրով պայմանագրի շրջանակներում էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով 11.03.2024թ. ներկայացրած «ՀՀ ԼՄՎՔ ՀԲՄԱԾՁԲ-21/65» ծածկագրով պայմանագրի կամ դրա կատարման մի մասի կատարման արդյունքների վերաբերյալ հանձնման-ընդունման ավարտական արձանագրությունը Վանաձորի համայնքապետարանին ստորագրել պարտավորեցնելու և որպես հետևանք՝ «Լեոպոլդ և ընկերներ» ՍՊԸ-ին «ՀՀ ԼՄՎՔ ՀԲՄԱԾՁԲ-21/65» ծածկագրով պայմանագրի շրջանակներում կատարված աշխատանանքերի դիմաց չվճարած 36.409.790 ՀՀ դրամը Վանաձորի համայնքապետարանին վճարել պարտավորեցնելու պահանջների մասին:

ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 234.6-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ դատարանը հայցադիմումը վարույթ ընդունելու հարցը լուծում է այն ներկայացվելուց հետո՝ եռօրյա ժամկետում:

Նույն հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ հայցադիմումը վարույթ ընդունելու հետ միաժամանակ դատարանը կայացնում է որոշում՝ պատասխանողից տվյալ գնման գործընթացի հետ կապված պատասխանողի տիրապետման տակ գտնվող բոլոր ապացույցները պահանջելու մասին:

ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 234.6-րդ հոդվածի 3-րդ մասի համաձայն՝ ապացույցներ պահանջելու վերաբերյալ որոշումը կատարվում է պատասխանողի կողմից որոշումը ստանալուց հետո՝ հնգօրյա ժամկետում:

Նույն մասի երկրորդ պարբերության համաձայն՝ նախատեսված ժամկետում պատասխանողի կողմից ապացույցներ պահանջելու վերաբերյալ որոշման պահանջները չկատարվելու դեպքում գործը քննվում է դրանում առկա ապացույցների հիման վրա, իսկ հայցվորի վկայակոչած այն փաստերը, որոնք ենթակա են հաստատման պատասխանողի տիրապետման տակ գտնվող ապացույցներով, համարվում են հաստատված:

Ուսումնասիրելով ներկայացված հայցադիմումը, կից փաստաթղթերը, գտնում եմ, որ այն պետք է ընդունել վարույթ, քանի որ առկա չեն հայցադիմումի ընդունումը մերժելու կամ այն վերադարձնելու հիմքերը:

Միաժամանակ, Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Վանաձորի համայնքապետարանից պետք է պահանջել Վանաձորի համայնքապետարանի և «Լեոպոլդ և ընկերներ» ՍՊԸ-ի միջև 10.08.2021թ. կնքված թիվ «ՀՀ ԼՄՎՔ ՀԲՄԱԾՁԲ-21/65» ծածկագրով պայմանագրի շրջանակներում էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով 11.03.2024թ. ներկայացրած «ՀՀ ԼՄՎՔ ՀԲՄԱԾՁԲ-21/65» ծածկագրով պայմանագրի հետ կապված իր տիրապետման տակ գտնվող բոլոր ապացույցները:

Ղեկավարվելով ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 199-րդ հոդվածնով, Դատարանը

ՈՐՈՇԵՑ

1.«Լեոպոլդ և ընկերներ» ՍՊ ընկերության կողմից ներկայացված հայցադիմումն ընդդեմ Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Վանաձորի համայնքապետարանի՝ «Լեոպոլդ և ընկերներ» ՍՊԸ-ի կողմից Վանաձորի համայնքապետարանի և «Լեոպոլդ և ընկերներ» ՍՊԸ-ի միջև 10.08.2021թ. կնքված թիվ «ՀՀ ԼՄՎՔ ՀԲՄԱԾՁԲ-21/65» ծածկագրով պայմանագրի շրջանակներում էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով 11.03.2024թ. ներկայացրած «ՀՀ ԼՄՎՔ ՀԲՄԱԾՁԲ-21/65» ծածկագրով պայմանագրի կամ դրա կատարման մի մասի կատարման արդյունքների վերաբերյալ հանձնման-ընդունման ավարտական արձանագրությունը Վանաձորի

համայնքապետարանին ստորագրել պարտավորեցնելու և որպես հետևանք՝ «Լեոպոլդ և ընկերներ» ՍՊԸ-ին «ՀՀ ԼՄՎՔ ՀԲՄԱՇՁԲ-21/65» ծածկագրով պայմանագրի շրջանակներում կատարված աշխատանանքերի դիմաց չվճարած 36.409.790 ՀՀ դրամը Վանաձորի համայնքապետարանին վճարել պարտավորեցնելու պահանջների մասին, ընդունել վարույթ:

2.Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Վանաձորի համայնքապետարանից պահանջել դատարան ներկայացնել Վանաձորի համայնքապետարանի և «Լեոպոլդ և ընկերներ» ՍՊԸ-ի միջև 10.08.2021թ. կնքված թիվ «ՀՀ ԼՄՎՔ ՀԲՄԱՇՁԲ-21/65» ծածկագրով պայմանագրի շրջանակներում էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով 11.03.2024թ. ներկայացրած «ՀՀ ԼՄՎՔ ՀԲՄԱՇՁԲ-21/65» ծածկագրով պայմանագրի հետ կապված իր տիրապետման տակ գտնվող բոլոր ապացույցները:

3.Ապացույցներ պահանջելու վերաբերյալ որոշումը Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Վանաձորի համայնքապետարանի կողմից պետք է կատարվի սույն որոշումը ստանալուց հետո՝ հնգօրյա ժամկետում:

4.Որոշումն ուժի մեջ է մտնում կայացման պահից և բողոքարկման ենթակա չէ:

Դատավոր՝ Նաիրա Ավետիսյան

Digitally signed by AVETISYAN NAIRA 7501660379
Date: 2025.01.23 12:12:28 AMT

Տվյալ ֆայլերին կարող եք ծանոթանալ նաև մուտք գործելով "Էլեկտրոնային դատավարություն" համակարգ՝ cabinet.armlex.am